

ԹԻԼ 25980
Օգոստոս 15, 1978

Մեծայարգ
Տիար Խաչիկ Գուլյումեան
Թորոնթօ.

Յարգելի Տիար Գուլյումեան,

Թորոնթոյի մեր համայնքին մէջ երկրորդ ծուխ մը հաստատելու աշխատանքներու կապակցութեամբ՝ հրահանգած ենք որ Առաջնորդի Փոխանորդ եւ Թեմական Խորհուրդի փոխ-գանձապահ Հոգ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեանի նախագահութեամբ խորհրդակցական ժողով մը գումարուի երեքշաբթի Օգոստոս 29, 1978, երեկոյեան ժամը 8.00ին՝ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ: Սոյն ժողովին հրաւիրած ենք Եկեղեցւոյ ծիսական Խորհուրդը եւ համայնքիս օգտաշատ ազգայիններէն մի քանի անձեր:

Այսու գիրով կը հրաւիրենք ձեզ մասնակցելու սոյն ժողովին, որուն գլխաւոր օրակարգը պիտի ըլլայ ծրագրոււմը օրինական այն քայլերուն որոնք պիտի առնուին Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի հաւանութեամբ, կազմակերպելու համար երկրորդ ծուխ մը Թորոնթոյի մեր համայնքին մէջ:

Կը յուսանք որ նկատի ունենալով վերոյիշեալ թուականը ներկայ կը գտնուիք ժողովին, ձեր օգտակար թելադրութիւնները բերելու խորհրդակցութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ